

72 Քր  
Բ-20

ԿԱՐԷՆ ԲԱԼԵԱՆ

Արդի Հայ շարտարապետութեան  
Ազգային Ինֆնատիպութիւնը

Առանձնատիպ «ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԷՍ»ի Թ. հատարէն

Խմբագիր՝ ԵՐՈՒԱՆԻ Հ. ՔԱՍՈՒՆԻ

Գ Է Յ Բ Ո Ւ Թ

1961

72 Apr 1963

D-201 P. 100 to 105 y.

to here, & up.

to 100 & up.

x, 198.1

# Արդի Հայ Ճարտարապետութեան Ազգային Ինֆնատիպուրիւնը


ԿԱՐԷՆ ԲԱԼԵԱՆ

Ազգային ճարտարապետութիւնը կարող է ներկայացուել որպէս միասնական տարածա-ժամանակային մի առանցք, որ ձգուում է նրա ահունքներից մինչև արդիականութիւն, վրան ապուցուած բազմաթիւ եւ բազմապիսիօրէն ձիւղաւորուած ոճերով եւ ժամանակաշրջաններով, բայց միաւորուած տարածութեան եւ ձևադոյցման օրէնքների ընդհանուր ծաղումնարանական հիմքի կազմակերպման եւ փոխազդեցութեան միասնական ըմբռնմամբ:

Ճարտարապետը մանուկ տարիներից ընկալում է հարազատ մշակոյթի ինքնատիպ դժերը: Սակայն բացի իր հոգեբանութեան մէջ ներդրուած ազգային դժերից, նա ճանաչում է անցեալը, աւանդութիւնները, իր մշակոյթի բաղադրամասերը:

Արդի ճարտարապետութեան համար առաջնային են աւանդականի եւ նորարականի յարաբերութեան, ճարտարապետութեան ազգային ինքնատիպութեան արտայայտման նոր ձևերի որոնման հարցերը: Հռչակելով ճարտարապետութեան ազգային միասնութեան սկզբունքը, պատմութեան երկարատեւ ժամանակաշրջանի ընթացքում, միեւնոյն ժամանակ մարտնչելով արդի ճարտարապետութեան «արդիականութեան» համար, փաստօրէն զբւոյժում է աւանդութիւնների եւ նորարարութեան յարաբերակցութեան հարցը:

Ուսումնասիրելով, ճանաչելով անցեալի փորձը, ճարտարապետը ոչ միայն պէտք է հրաժարուի ազգային ժառանգութիւնից, այլ ընդհակառակը՝ աշխուժօրէն օգտագործի այն: Հարցը նրանումն է, թէ ի՞նչը եւ ինչպէ՞ս, այսինքն՝ ի՞նչը կիրառել, առանձնայատուութիւնները, ազգային ճարտարապետութեան սկզբունքները, թէ՞



1963

միայն արտաքին ձեւերը, յօրինուած քային մանրամասները, եւ ինչպէ՞ս օգտագործել՝ ուղղակի տեղափոխելով, «մէջբերումների ձեւով», թէ՛ մշակելով, հասնելով նրա տրամաբանական էութեանը, վերածելով այն խորհրդանշանի :

Ճարտարապետութեան ազգային ինքնատիպութիւնը բնորոշուած է տուեալ ազգին յատուկ, նրա մշակոյթի դարգացման արտաքին եւ ներքին դործօններով՝ բնութեամբ, պատմութեամբ եւ կենցաղով որոշուող եւ նրա հոգեւոր կերտուածքի վրայ ազդող դժերի ամբողջութեամբ : Անհրաժեշտ է նշել որ ճարտարապետութեան, ինչպէս եւ ամբողջ մշակոյթի ազգային ինքնատիպութիւնը դա հենց ժողովրդի հոգեւոր կերտուածքով, նրա աշխարհը բռնամամբ որոշուող ձեւերի ամբողջութիւնն է, եւ ոչ թէ՛ առանձին բնորոշ դժեր, որոնք, անկասկած, առկայ են եւ այլ ազգերի մշակոյթի մէջ, քանի որ ամէն մի ազգային մշակոյթի դոյուՅեան անվիճարկելի փաստ են արտաքին կապերը : Պատմութիւնը չի ճանաչում «տեղական մշակոյթի» ստեղծման նախադէպ, որը չուղեկցուէր արտաքին ազդեցութեամբ . այն չի ճանաչում մի նախադէպ, երբ բարձր զարգացած մշակոյթը ազդեցութիւն չդործէր, բնդ որում առանձին բնորոշ դժեր եւ առանձնապատկուցութիւններ հեշտութեամբ փոխանցուած եւ ընկալուած են այլ մշակոյթի կողմից : Եւ մէկը, եւ միւսը յատկանշական են հայ մշակոյթի համար, որի ամենացայտուն դրսեւորումներից մէկը ճարտարապետութիւնն է : Եւ եթէ այս դժերի ծագումնաբանական, էական կառուցուածքը լինում է համազօր, ապա «տեղական առանձնապատկուցութիւնների» հետ միասնական համակարգում նրանք ներկայացնում են նոր օրակ :

Բայց դրա հետ միասին, եթէ ազգային մշակոյթը ամբողջութեամբ ընկալուած է որպէս ինքնուրոյն համակարգ, ապա այդ մշակոյթի մէջ ծագող առանձին երեւոյթները կարող են առաջանալ այլ մշակութային համակարգերի հիման վրայ, կորցնելով իրենց ազգային բնոյթը :

Նախ՝ նրանք կարող էին լուծուած լինել այլ, արհեստականօրէն բերուած համակարգում, որն արմատապէս հակադրուած է տուեալ «տեղական մշակոյթին» (այսօր սա այնքան տարածուած երեւոյթ է, որ կասկածի տակ է դնում ամբողջական ազգային մշակոյթներին զոյութեան փաստը ընդհանրապէս) : Երկրորդը՝ առանձին երեւոյթը կարող է ազգային չհամարուել այն դէպքում, եթէ արտաբուստ չի արտայայտուած տուեալ համակարգի բնորոշ (աւանդական) ձեւերը :

Ճարտարապետութեան ազգային ինքնատիպութեան ճանաչողական մասը հիմնուած է երեք խարխիւների վրայ՝ բնութիւն,

կենցաղ, պատմութիւն (հասկացողութիւնները ընդհանրացուած են, առաջինը պարունակում է այն ամէնը, ինչ վերաբերում է տարածութեանը, յնական և արհեստական միջավայրին, երկրորդը՝ աւանդութիւններին, երրորդը՝ հարցի ընկերաբանական կողմին)։ Դժուար չէ նկատել, որ երեք կողմերն էլ սերտ կապուած են, նրանց սահմանները վերացուած են։

Ասիայի և Եւրոպայի բարձրաւանդակներում մարդիկ միեւնոյն եղանակով են իրենց ենթարկում բնութիւնը (օրինակ՝ կառուցապատման աստիճանածեւ յօրինուածքը թեք տեղանքի վրայ)։ Միատեսակ են պատի շարուածքի սկզբունքները միջնադարեան Անիի և Վլադիմիր-Սուզդալեան Ռուսիայի վանքերում։ Որոնելով արտաքին տարբերութիւններ ազգային մշակոյթների միջև, մենք յաճախ դռնում ենք... նմանութիւններ։ Ոչ միշտ հնարաւոր է որոշել ազգային ճարտարապետութիւնների ինքնատիպութեան և տարբերութեան դժեբը, ինչպէս նաև ազգերի բնաւորութիւնները բնորոշող յատկանիշները — պարզում է բազմաթիւ դժեբ յատուկ են ընդհանրապէս բոլոր ազգերին։ Տարբերութիւնը միայն ձևերի, նրանց արտայայտուածութեան աստիճանի մէջ է։

Օրինակ, քրիստոնէական ճարտարապետութիւնը խորապէս կանոնիկ է։ Յատակադիժը, կառուցուածքային համակարգը, քարի շարուածքի եղանակը, նոյնիսկ բարձրաքանդակները բիւզանդական, ռուսական, վրացական կամ հայկական ճարտարապետութեան մէջ շատ մօտ են, և նրանց ազգային առանձնայատուկութիւնները, տարբերութիւնները բացայայտման համար պատմաբան-դիտնականները ճիշդ են գործադրում։ այստեղ շատ բան ուսումնասիրութեան կարիք է զգում։ Սակայն սրանցից իւրաքանչիւրի ազգային ինքնատիպութիւնը միշտ եղել է ակնառու։

Ինչո՞ւմ է այն կայանում։ Սրանցից իւրաքանչիւրի արտայայտած աշխարհըմբռնման մէջ։

Այլաբարճըմբռնման, կերպարի միջոցով արտայայտում է ազգային ճարտարապետութեան բովանդակութիւնը, որը, ինչպէս երեւում է, կարող է արտայայտուած լինել լուսական մօտ, նոյնիսկ միանման ձևերով։ Առաւելապէս սա վերաբերում է ժամանակակից ազգային ճարտարապետութիւններին, որոնք մօտ են ձևով, բայց ինքնատիպ բովանդակութեամբ։

Իրենց ճարտարապետութեան բովանդակութեան մէջ էլ կայանում են նրա ազգային ինքնատիպութեան ակունքները։

Բովանդակութեանն են վերաբերում մասշտաբը, տեկտոնիկան, լոյսը և ստուերը, գոյնը, ճարտարապետական ծաւալների, արտաքին և ներքին տարածութիւնների, մանրամասների և ամբող-

ջութեան, ճարտարապետութեան եւ բնութեան փոխարարներութիւնը, որը հիմնուած է աշխարհի ազգային ըմբռնման եւ արտայայտութեան վրայ:

\*  
\*\*

1950-ական թուականները սկիզբներին՝ սովետական, եւ իր հերթին հայկական ճարտարապետութեան զարգացման մէջ տեղի ունեցաւ պատմական փոփոխութիւն: Եթէ մինչպատերազմեան եւ ետպատերազմեան տարիներին ծրագրային էր դասական եւ ազգային ժառանգութեան կիրառումը, ապա 1950-ական թուականները կէսերից՝ դործնական, յատակազծային, տնտեսական, կառուցութեան ինժեներները լուծումը դառնում է առաջնահերթ թէ՛ քաղաքաշինութեան, թէ՛ առանձին շէնքերի ճարտարապետութեան մէջ, ետին դիրքեր մղելով ճարտարապետութեան արտաքին, «ճակատային» կողմը:

Բնականաբար, դա արտայայտուած էր եւ ճարտարապետները՝ ազգային ճարտարապետութեան հանդէպ ունեցած վերաբերմունքի մէջ: Հայաստանում ազգային աւանդութիւնները չէին կորցնում իրենց ազդեցութիւնը սովետահայ ճարտարապետութեան վրայ՝ նրա զարգացման ոչ մի շրջանում: 1920-1930-ական թթ. Հայաստանում կոնստրուկտիվիստական-դործնական ճարտարապետութեան զարգացման օրինակը հաստատում է այս տեսակէտը:

Հայ կոնստրուկտիվիստ-ճարտարապետները կրել են ուսուսական «Գեղարուեստ-տեխնիկական արուեստանոցների» ճարտարապետական դպրոցի անմիջական ազդեցութիւնը: Բայց հայ նորարար-ճարտարապետների դործերում թերեւս ամենանշանաւորը ազգային տեսանկիւնի արտայայտումն էր իրենց ստեղծագործութեան մէջ: Միջնադարեան ճարտարապետական ձեւերի մերժման հետ մէկը-տեղ հայ կոնստրուկտիվիստների յայտարարութիւնների մէջ հնչում էր ժողովրդական ճարտարապետութեան կառուցութեան եւ յատակազծային սկզբունքների կիրառման կոչը: Այս երեւոյթը նշանաւորում է նրանց աշխատանքները եւ հետաքրքրութիւն է առաջացնում նրանց հանդէպ:

Ոչ մի կերպ չի կարելի համարել, որ 1960-ական եւ 1970-ական թթ. հայ ճարտարապետութեան զարգացման երկու տասնամակնիւրը, որ ժառանգել եւ արտայայտում էին 1950-ական թուականների կէսերի վերակառուցման աւանձնայատկութիւնները, հանդիսանում են ազգային ճարտարապետութեան ժխտման տասնամակնիւր: Ընդհակառակն, սա արտայայտման ձեւերի հարստացման, ճարտարապետական լեզուի ոճարանական կանոնների փոփոխման շրջան էր,

որ կապուած է նոր շինարարական նիւթերի, տեխնոլոգիայի, նոր կառուցուածքային համակարգերի ստեղծման հետ :

Այս շրջանի համար բնորոշ է ժառանգութեան նոր իմաստաւորումը, գլխաւորումը, նրա խորը, էական հիմքերին հասնելու ձգտումը : Կարեւորը սա է :

Ողջ ազգային ճարտարապետութեան պատմութեան չափանիւշով վերջին երկու տասնամեակը մեծ ժամանակաշրջանն է, բայց վերը նշուածը թոյլ է տալիս այն առանձին փուլ համարել : Անհրաժեշտ է մէկ անգամ եւս նշել սովետահայ ճարտարապետութեան այնպիսի կարեւոր յատկութիւն (ընդհանրապէս հայ ճարտարապետութեան կարեւոր առանձնայատկութիւններից մէկը), ինչպիսին է զարգացման համասեռութիւնը : Ազգային ճարտարապետութիւնը բոլոր փուլերի եւ ուղղութիւնների զարգացման առանցքն էր շուրջ 60 տարուայ ընթացքում՝ Ա. Թամանեանի, Ն. Բունիաթեանի, «կոնստրուկտիվիստների» ճարտարապետութիւնից ընդհուպ մինչեւ վերջին ժամանակաշրջանը : Սա մէկ անգամ եւս ապացուցում է յետադարձ հետադոման միջոցով : Ա. Թամանեանի՝ ոճական արտաքին ձևերի վերյուշի եւ նրանց կիրառման եղանակի հիմնադրի, ստեղծարործութեան մէջ պարզ արտայայտուած է տարածութեան, ազգային ճարտարապետական էական համընդհանուր առանձնայատկութիւնների, նրա բովանդակային կողմերի պարզարանման ձգտման դիրքորոշումը :

Ճարտարապետութեան ազգային ինքնատիպութեան պահպանման պարապետներից մէկը նրա միասնութիւնն է շրջապատի, բնութեան, տեղանքի հետ :

Ա. Թամանեանը, ստեղծելով Երեւանի գլխաւոր յատակագիծը, քաղաքաշինական, տարածական խնդիրների լուծման ժամանակ օգտագործեց բնութեան հետ կապուելու ազգային աւանդոյթները, զտաւ բնութեան եւ ճարտարապետութեան փոխազդեցութեան մէջ հաւասարակշռութեան կէտերը : Նա առաջարկեց քանդել կաւաչէն քաղաքը : Երեւակայութեան մէջ նա արդէն տեսնում էր վարդադոյն տուֆակերտ Երեւանը : Բայց ճարտարապետը պահպանեց հին քաղաքի տեղադրման աւանդոյթը : Եւ ոչ միայն պահպանեց, այլ եւ զարգացրեց, շեշտեց նրա տարածական ձևեր եւ ուղղութիւնը, բացելով ամբողջ քաղաքը եւ նրա հիմնական առանցքը՝ Հիւսիսային Պողոտան, Արարատի կողմը :

Երեւանը, որ 1924 թ.ին (Թամանեանի առաջին գլխաւոր յատակագծի ստեղծման ժամանակ) ունէր 27 հարիւրամեակի պատմութիւն, իրենից ներկայացնում էր 30 հազար բնակչով դաւառական

փոքր քաղաք՝ շրջապատուած բլուրների ամփիթատրոնով, որոնք հարաւից բացուած էին դէպի Արարատ :

Երեւանը, արդէն դարձած միլիոնանոց բնակչութեամբ խոշոր քաղաք, մինչ օրս պահպանում է իր կենսունակութիւնը, շարժուն ամբողջականութիւնը, շնորհիւ նրա մէջ անսխալ ներդրուած ազգային աւանդոյթի, որը հասկացուել եւ մշակուել էր, համադրուել ժամանակակից առաջաւոր քաղաքաշինական մտքի հետ :

Երեւանը վեր է ածուել «արեւի», որի շուրջը պտտուած են քաղաքների «համակարգութիւնները» : «Արեւ», որը տարածութեան մէջ ունի որոշակի շեշտուած կողմնորոշը՝ Արարատ լեռը :

Այդպէս են կառուցուել հին Հայաստանի շատ քաղաքներ՝ Արմաւիրը, Արտաշատը, Գուգինը, Վաղարշապատը : Այս աւանդութիւնը գոյութիւն ունէր դեռեւս Ուրարտուում, երբ հիմնուել էին էրեբունին, Թէյշեբաինին, Արզիշտիխինիլին. բոլորի համար Արարատը չափանիշ եւ խորհրդանիշ էր :

Երեւանի Հիւսիսային Պողոտան դեռ գոյութիւն չունի, բայց նա կայ գլխաւոր յատակագծի վրայ, հիմնական լիմաստային եւ ուժաբանական առանցք, որ անփոփոխ առկայ է քաղաքի գլխաւոր յատակագծի բոլոր տարբերակներում : Իսկ իրականում Հիւսիսային Պողոտան արդէն նշմարուած է կառավարական Տան, Օփերային թատրոնի, Հայաստանի 50-ամեակի առթիւ կանգնեցուած կոթողի, հասարակական-վարչական կեդրոնի այլ շէնքերի ծաւալներով :

Ինչ վերաբերում է առաջին երեք կառոյցներին, ապա նրանք Ա. Թամանեանի աւանդոյթների լաւագոյն հաստատումն են, այնինչ հասարակական-վարչական կեդրոնը, որ աւարտում է պողոտան իր շորս ապակե-բետոնային աշտարակներով՝ 50-ական թուականների Փունկցիոնալիստական ճարտարապետութեան ոճով, ոչ միայն դուրս է դալիս նշմարուած համալիրի միասնականութիւնից, այլեւ մեքենայօրէն շարունակում է պողոտայի ճառագայթը՝ խախտելով նրա հիմնական յատկութիւնը՝ տեսողական ամբողջականութիւնը :

Սկսուած է Հիւսիսային Պողոտայի մի մեծ հատուածի շինարարութիւնը (ճարտարապետներ՝ Զ. Թորոսեան, Ս. Գուրգադեան, Ա. Մխիթարեան)՝ Թամանեանի յուշարձանից մինչեւ Հայաստանի 50-ամեակի կոթողը : Նախատեսուած է բլուրի ստորոտից աստիճաններից եւ հարթակներից կազմուած կանաչապատ պողոտայ անցկացնել, որն աւարտուում է արդէն կառուցուած կոթողով եւ դիտահրապարակով : Մարդ-քաղաք-բնութիւն կապը անկեղծ է. պողոտայի իւրաքանչիւր կէտից վեհ համայնապատկեր է բացուում ցածուս սփռուած Երեւանի եւ Մասիսների վրայ :

Ոչ պակաս պայծառ եւ աշխոյժ է ներկայանում այս բազմա-

բնոյթ համակարգը քաղաքի տարրեր շրջաններից :

Համալիրի ճարտարապետութիւնը հարուստ է ազգային խորհրդանշաններով : Յաւերժութիւն բնորոշող շրջանաձև նշանը, որը փորագրուած է կոթողի ստորոտին, կարելի է տեսնել դեռեւս հեթանոսական շրջանի հայկական բազմաթիւ յուշարձանների վրայ : Կոթողի դադաթը յիշեցնում է ուրարտական աշտարակներին : Յուշարձանի կողքին, չորս մոյթերի վրայ դրուած է հօր բետոնաբազալտային քառակուսի սալ, կեդրոնում՝ բացուածքով : Առաջացած ներքին քառակուսու մէջ, բաց երկնքի տակ, դտնուած է քարէ դանդուածեղ եռածայր կոթող, որի նախատիպերն են Հայաստանի պատմութեան թանգարանում ցուցադրուած ոչ-մեծ յուշաքարերը Արտաշէս թագաւորի՝ արամերէն արձանագրութիւններով : Այս դրութիւնները՝ թագաւորների «քարէ ուղերձները», յաւերժ են . ոչ կրակը, ոչ ջուրը, ոչ ժամանակը չեն կարող ջնջել նրանց : Նոյնպիսի յաւերժ դրութեամբ են հեղինակները գրել բառերը կոթողի վրայ, որ տեղադրուած է ի պատիւ պետականութեան հիմնման :

Սալի ներքին պարագծով տեղադրուած են փոքր, զարդանախշուած քարէ կոթողներ, որոնք յիշեցնում են միջնադարեան խաչքարերը : Բնականաբար, համադրութիւնը անուղղակի է : Հեղինակների օպտաործել եւ դարդացրել են կարեւորագոյն պատմական երևոյթի յաւերժացման ազգային աւանդոյթը : Ընդ որում՝ քարդացուած է ոչ միայն աւանդոյթի հոգեւոր, այլևս գեղարուեստական կողմը . սալերը հենց դրա համար էլ կոչուած են խաչքար (ոչ բառացիորէն, նրանց սիւսէն գուրկ է կրօնական էութիւնից, նրա հիմքն են կազմում բարդ դարդա-բուսական պատկերները եւ մակադրութիւնները), որ պահպանում են նրանց կազմաբանական օրինաչափութիւնները, չկրկնելով նախատիպը ոչ ամբողջութեան, ոչ էլ մանրամասների մէջ :

Այստեղ աւանդոյթը պահպանուած է աւելի շուտ որպէս խորհրդանշան, այլ ոչ թէ՛ ձև : Վարպետութիւնը, որով նկարուած են մանրամասները, այն իմաստը, որը դրուած է այդ աշխատանքի մէջ, թոյլ են տուել հեղինակներին «բարձրացնել» ազգային մշակոյթի թերեւս ամենաինքնատիպ շերտը (խաչքարերի արուեստը յայտնի է միայն Հայաստանում) մինչև այսօրուայ մակարդակը :

Մանրամասներ-խորհրդանիշեր . նրանք կամ աւանդորէն ազգային են, կամ նրանց ազգային պատկանելութիւնը այնքան ակնյայտ է (գեղազարդային խեցեղէն կամ քարէ փոքր ձևեր), որ նրանք ունեն «գործողութեան» շատ մեծ «չառաւիղ», տարածելով իրենց ազդեցութիւնը ամբողջ շրջապատող առարկայա-տարածական միջավայրի վրայ, որն արտաքննապէս գուրկ է նման յատկանիշներից :

Օրինակ՝ զանդուածային բնակելի կառուցապատում կամ զբոսայգի, առաջացնելով որոշակի «ազդային տարածութիւն»:

Որոշ չափով արդի հայ ճարտարապետութեան մէջ նման դեր է կատարում նաև քարէ աւանդական շարուածքը (հարկ է յատուկ նշել, որ քարը յաճախ կորցնում է իր արտայայտչականութիւնը որպէս երեսպատող նիւթ ծառայելիս):

Առանձին լուծումները չտարբերակուածութիւնը, յատկապէս երեւանի կեդրոնի կառուցապատման մէջ, ձեռք է բերել օրէնքի նշանակութիւն՝ ճարտարապետութեան և գեղարդային-կիրառական ձեւերի համադրութեան և հնի ու նորի համատեղելիութեան իմաստով:

Երեւանի Օղակաձեւ զբոսայգին, Արուիկան Փողոցը, Սայթ-Նոյա Պողոտան հարցի ընդհանուր լուծումն են, չնայած կան և այլ հետաքրքիր օրինակներ՝ Ֆիզիկոսների աւանը և քաղխորհրդի ամառանոցը Երեւանում, Արզականի, Ստեփանաւանի հանդստեան տները և Ռ. Իսրայէլեանի մեծաքանակ ճարտարապետական փոքր ձեւերը, որոնք մարդարտները պէս սփռուած են ամբողջ Հայաստանով մէկ:

Այստեղ ևս կայ խորհրդանիշը, արտայայտման ձեւերը բազմազան են՝ մինչ-ուրարտական ժամանակաշրջանի վիշապներ Օղակաձեւ զբոսայգու լճակի մօտ և Ֆիզիկոսների աւանի տարածքի վրայ, կամ միջնադարեան խաչքարեր էջմիածնի խճուղու և Արզականի հանդստեան տների մօտ: Նման իմաստ են կրում նաև ժողովրդական ճարտարապետութեան ոգով արուած քարէ շարուածքը նոյն Օղակաձեւ զբոսայգում, Գեղարդի ճանապարհի ուղեցոյցը՝ վանքի ներակողմի քանդակի նուրբ ոճաւորումը: Եւ շատ այլ, ոչ պակաս նշանակալից օրինակները:

Արդի հայ ճարտարապետութեան համար բնորոշ է արտայայտչական եզրանակների յարմարեցումը նոր ոճական կանոններին: Եթէ նախորդ ժամանակաշրջանի համար յատկանշական էր աւանդական ազդային ձեւեր ճակատներին աւելացնելը, որոնց նոյնպէս ձգտում էին ենթարկել «հին հայկական օրինաչափութիւններին», ապա 60-70-ական թուականներին նոր ոճական համակարգով էին լուծուած թէ՛ ճարտարապետութիւնը, թէ՛ արտայայտչական ձեւերը:

Լուծման ձեւերից մէկը՝ ճակատների խոշոր հարթ մակերեսների կիրառումն էր որմնաքանդակային յօրինուածքների համար: Որպէս օրէնք, դա տուֆակերտ մեծ հարթ յօրինուածքներն են:

Հետեւենք այդ ձգտման զարգացման բնթացքին:

«Անի» հիւրանոցի ճակատի յօրինուածքը (ճարտարապետներ՝ Ֆ. Դարբինեան, Ֆ. Յակոբեան, Է. Սաֆարեան, քանդակազոր՝ Սո-

ջարշահան), կատարում է տեղեկագրական նշանի դեր՝ ամբողջովին ենթարկուած ճարտարապետութեանը: Պատի հարթութիւնից զգալի դուրս եկող երկրորդ յարկը ծածկում է բարձրաքանդակը խոր ստուկերով եւ «խանդարում» նրա աշխոյժ մասնակցութեանը շէնքի ճակատի ընդհանուր յօրինուածքի ընկալմանը մեծ հեռաւորութիւններից: Միեւնոյն ժամանակ մօտ տարածութիւնից հեշտութեամբ կարգացուած է «տեղեկագրային» նիւթը:

«Էրերունի» թանգարանի ճակատի վրայ (նկար 1 - ճարտ.՝ Բ. Արզումանեան, Շ. Աղատեան, քանդակագործ՝ Ա. Յարութիւնեան), ընդհակառակը, ձեւերը կոթողային են եւ հաշւուած են ընկալմանը հեռուից, բարձրաքանդակները՝ յօրինուածքի ամենազործօն տարրն են: Մեծ բարձրաքանդակները՝ փորալորուած խուլ ճակատի ամբողջ մակերեսի վրայ, տեկտոնիկ են, ենթարկուած են ընդհանուր քաղաքաշինական լուծմանը, պլաննաւորուած պողոտայի երկայնական առանցքով դրուած շէնքի եւ ուրարտական բնակավայրի բլուրի եւ պողոտայի նկատմամբ ունեցած փոխյարաբերութիւնով:

Արտայայտչական ձեւերի եւ ճարտարապետութեան համադրութեան լաւագոյն օրինակներից է Գ. Սունդուկեանի անուան թատրոնի շէնքը (նկար 2 - ճարտ.՝ Ռ. Ալլահվերդեան, Գ. Մնացականեան, Գ. Բարխուդարեան, քանդակագործ՝ Ա. Յարութիւնեան): Դժուար է որոշել թէ որն է ստաջայինը յօրինուածքում, ճարտարապետութիւնը, թէ՛ քանդակը, նրանք այնքան ներդաշնակ, միմեանց լրացնող, համամասնային են, այնքան նուրբ են ձեւերը եւ ընդհանրացուած են բարձրաքանդակների բովանդակութիւնները:

Լենինականի կայսրանի (ճարտարապետ՝ Ռ. Եղոյեան) եւ Երեւանի «Դուին» հիւրանոցի (նկար 3, 4 - ճարտ.՝ Ա. Ալեքսանեան, է. Սաֆարեան, Փ. Յակոբեան, քանդակագործ՝ Ա. Շիրազ) ճակատների բարձրաքանդակներին տրուած է մեծ նշանակութիւն: Նրանք պէտք է աշխատեն շէնքի ողջ ճարտարապետութեան համար, նրանց տեղը պատի մակերեսի վրայ հաշւուած է մեծ հեռաւորութիւններից դիտելու համար: Բայց բարձրաքանդակների ձեւերի մանր լուծումը թոյլ չի տալիս հասնել այդ նպատակին, եւ նրանք վեր են ածուծ զարդանախշային տարրերի, որոնք արտայայտում են ճարտարապետութեան «ազդային դէմքը»:

Բացայայտ հակադրուած են ճարտարապետութիւնը եւ զարդաքանդակը կոմիտաս Պողոտայի վրայ կանգնած նախաշծային ինստիտուտի (ճարտարապետ՝ Ա. Աղալեան) շէնքի վրայ: Ապակէ-բետոնային (ամբողջովին ապակեպատ ծաւալների վրայ կախուած են արեւապաշտպանիչ սալեր) ճարտարապետութեան եւ բարձրաքան-

դակները հակադրութիւնը աւելի են ընդդժում ազգային ձեւերի արտայայտչականութիւնը: Ծաւալա-տարածական եւ յորինուածքային լուծումները ոճաւորումը նոյնպէս վեր է ածուում օգտագործուած բովանդակային ընթացքի:


Պարզութիւնը (տրամաբանականութիւնը, այլ ոչ թէ պարզունակութիւնը) եւ միեւնոյն ժամանակ բարդութիւնը (բազմազանութիւնը, այլ ոչ բարդացուածութիւնը) բնորոշ են Գորիսի բնակելի թաղամասին (նկար 5 - ճարտ. Յ. Պօղոսեան, Ա. Մկրտչեան, Ա. Սաղոյեան) համակցուած բնակելի բլիճների «մաքուր» քառակուսիների մէջ ներդժուած պարզ յատկագծերը, ելնելով տեղանքի առանձնախտկութիւններից, տեղագրուած են լանջի վրայ հասարակական-առեւտրական կեդրոնի շուրջը: Այստեղ է այն «խաղի» սկիզբը, որ տանում են հեղինակները: Ուղի հնի եւ նորի, մասնազիտականի եւ ժողովրդական, ոճի եւ ոճաւորման հանդիպման կէտում:

Հարկ է նշել, որ հեղինակներին յաջողուել է պահպանել Հասարակչութիւն վարպետութեան բարակ ճոպանի վրայ, չնայած նրանց ակնյայտ ձգտմանը այս շրջանի համար աւանդական ժողովրդական ճարտարապետութեան հետ ոճական նմանութեան հասնելու, յատկապէս ծաւալատարածական լուծման մէջ: Նման ձգտումները անկեղծ են, բայց արտայայտուած չեն աւանդութիւնների կրկնման կամ ձեւերի օգտագործման միջոցով:

Ոճական միասնութիւնը պահպանուած է շնորհիւ տեղական ազգային ճարտարապետութեան բազմազանութեան վարպետքէն վերստեղծուած յորինուածքի, որոշ երկրորդական տարրերի գեղազիտացման (օգտափութեան հորեր, տանիքները եւ այլն):


Այլ օրինակ է Կիւնդործիչների Ստեղծագործութեան Տունը Դիլիջանում (ճարտարապետներ՝ Յ. Պօղոսեան, Ս. Ուալիկեան, Ա. Մկրտչեան): Սկզբունքներն այստեղ այլ են. ընդհանուր նշանակութեան չէնքերի շուրջ խմբաւորուած առանձին տնակների ոչ-աւանդական յորինուածքի «ազգայինը» արտայայտուած է մանրամասների միջոցով: Քարի կոպիտ (ժողովրդականը յիշեցնող) շարուածքը մուտքերի աւանդական կամարների վրայ կախուած պատշգամբները ճաղերի զուարճահնար, նուրբ ոճաւորուած նկարով: Եւ դիւաւորը, մանրամասների մեծացուած «թատերականացուած» մասշտաբի (մեծ կլոր պատուհաններ, կամարներ, քարի շարուածքը), այլ ոչ թէ ճակատների միջոցով (ճարտարապետութիւնը համամասնային է տեղանքին, մեկտանները ցրուած են անտառով մէկ): Այս ձեւով աւելի հեշտ է կարգալ հեղինակի մտայնացումը, տեսնել նրա մտքերի ազդելու: Նրանց հիմքում Հայաստանի տաք շրջանների՝ Դիլիջանի,

5963/




Նկար 1. Նրեւան — «Էնքերունի» բանգարան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԱՐԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳԱՐԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Նկար 2. Երևան — Գ. Սուհուրյանի անուան դրամատիկական բաղնիք




Նկար 3. Երևան — «Ռուխն» հիպոթեզ




Նկար 4. Երևան — «Գուլիս» հիւրանոցի մականոցի հարքաբաներակը







Նկար 6. Մարդարապատ — Հայաստանի Ազգազրույհի մեծ թանգարան




Նկար 7. Սարդարապատ — Հայաստանի Ազգագրութեան թանգարան .




Նկար Տ. Երևան — 1915 թ.ի Եղեռնի գոհերի յուշարձան-կոթող




Նկար 9. Երևան — 1967 թ.ի Երկունի գոհերի յուշարձան-կոթող



Նկար 10. Երեւան — «Ռուխա» կինոթատրոն



Նկար 11. Երեւան — Կոմիտասի անուան կամերային երաժշտութեան համերգարան



Նկար 12. Երևան — Երկտասարկուբեան Պալատ

Աշտարակի, Արարատեան դաշտավայրի ժողովրդական ճարտարապետութիւնն է :

Սարգարապատի Աղղաղրական Թանգարանը, հեղինակ՝ ՍՍՀՄ ժողովրդական ճարտարապետ Ռ. Իսրայէլեան, կրկնակի է նշուած կառոյցի «աղղութիւնը» : Ծէնքի միասնական ծաւալը բաժանուած է երեք շարքի — նաւերի, միջին նաւի մէջ ներդժած են երեք քառակուսիներ՝ ամֆիթատրոն բացուող ցուցասրահներ (նկար 6, 7) :

Իւրաքանչիւր դահլիճի ծածկը յիշեցնում է հազարաչէն՝ հայ ժողովրդական տան՝ գլխատան ծածկը : Հազարաչէնը փայտէ դժբէթանման ծածկ է կազմուած ութանիստների մի քանի մակարդակից, որոնք դէպի վեր նեղանում են եւ կազմում կեդրոնում բացուածք՝ երդիկ : Ռ. Իսրայէլեանի մօտ այն փոխարինուած է նախատիպը յիշեցնող բետոնէ կառուցուածքներով : Բայց ոճաձեւի նշանակութիւնը նրա ըացարձակ նոյնատիպութեան մէջ չէ : Սարգարապատի Թանգարանի «երդիկը» կրում է միայն լուսանցքի դեր, այնինչ գլխատան երդիկը ծառայում է եւ լուսաւորութեան, եւ օդափոխման համար, եւ որպէս ծխնելոյզ՝ կեդրոնում ուղղաձիգ առանցքով տեղադրուած օջախի համար :

Ընդհանրապէս հայ ճարտարապետութեան համար ընտրոշ է տարածական սկզբունքների եւ առանձին յօրինուածքային եղանակների ժողովրդական տան մանրամասների կիրառումը : Ռ. Իսրայէլեանի համար այս հնարքը նորի եւ ժողովրդին մօտ, հասկանալի աւանդականի (այնպէս ինչպէս աւանդական քարէ շարուածքը եւ զարդաքանդակը) կապի իրականացման միջոց է :

Բայց հեղինակը չի սահմանափակում ժառանգութեան ձեւական-յօրինուածքային «վերադաշնակմամբ» կամ ուղղակի «մէջբերումով» : Ռ. Իսրայէլեանին յատուկ է ազգային ճարտարապետութեան առանձնայատկութիւնների ճանաչումը, նրա խորքերը Թափանցելը, ստեղծադորձական մեկնաբանութիւնը :

Առաջին հերթին դա վերաբերում է հայ ճարտարապետութեան տարածական կառուցուածքների մասշտաբ-տեկտոնիկ յատկանիշներին եւ օրինաչափութիւններին : Սարգարապատի Թանգարանում՝ վարպետի վերջին խոշոր կառոյցում, նրանք դտել են, կարելի է ասել, «դասական» արտայայտութիւն :

Ծէնքի ծաւալը ամփոփ է, տեղայնացուած (հայ ճարտարապետութեան ամենախնայատիպ դժերից մէկը), գլխաւոր մուտքի կիսաշրջանաձեւ կամարը ընդգծում է նրա համաչափային կառուցուածքը՝ շէնքը ցածրիկ է, բայց վեհ : Եւ դա նոյնպէս աւանդական է : Սրբատաշ քարի խուլ մակերեսները զուգակցուելով ոչ մեծ բացուածքների հետ, շէնքին տալիս են կոթողայնութիւն : Միեւնոյն ժա-

մանակ չէնքը ներսից դուրս բացուած է դէպի բնութիւն՝ նուրբ դժուած պատուհանները չեն բաժանում ներքին եւ արտաքին տարածութիւնները, այլ երիզապատում, «եզրակաւորում» են բնասպտկերը, յիշեցնելով ինտերիէրները Վերածնունդի վարպետների կտաւների վրայ:

Բացարձակ ազգային, «քարային» է շէնքի յօրինուածքը: Քարից (տուֆ կամ բազալտ) շարուած պատը հայ ճարտարապետութեան մէջ ունի իր տեկտոնիկ կանոնները՝ որպէս օրէնք նա աշխատում է ոչ թէ մանրամասներով, այլ ամբողջ մակերեսով, ծաւալներով: Այստեղ աւանդական սովորոյթները յատկապէս հարուստ են: Մարդարապատի թանգարանի հեղինակը, զարդացնելով «պատի» թեման, կարծես փնտրում է նրա հետ կապուած ձեւեր: Գլխաւոր ճակատի երկու խորշերը իրենց էութեամբ աւանդական են, «բացայայտում են» նիւթի տեկտոնիկ առանձնայատկութիւնները, բայց իւրայատուկ են իրենց նկարուածքով եւ տեղին ըստ յօրինուածքի, քանի որ կտրուակ արտայայտում են իր մասշտաբով եւ զարդանախշով համեատ գլխաւոր մուտքի կամարը: Եւս մի բան՝ գլխաւոր, ինչպէս եւ միւս ճակատների խորշերը անակցում են դրսից շէնքի ներքին կառուցուածքի ընթերցմանը:

Քարէ ձեւերի վարպետ Իսրայէլեանը այս շինութեան մէջ քարին տուել է յստակ ոգեշնչուածութիւն, ստեղծելով վիմադիր, իր յօրինուածքով կատարեալ շինութիւն: Ազգայինը այնտեղ արտայայտուած է երկիմաստ, տարբեր մակարդակներով: Մէկը բնորոշում է ճարտարապետութեան որակական առանձնայատկութիւնները, յօրինուածքային (մասշտաբ, տեկտոնիկա), յատակադճային (եռանաւ մասնատումը, ազգային «գլխատան» աւանդական սկզբունքները), տարածական (այստեղ ազգայինը արտայայտուած է բնութեան եւ ճարտարապետութեան փոխազդեցութեան մէջ՝ շէնքը պարփակ է, կարծես հակադրում է բնութեանը, եւ միեւնոյն ժամանակ ենթարկւում է նրան):

Ազգային ինքնատիպութեան արտայայտման միւս մակարդակը աւելի խորհրդանշական է՝ շէնքը կարծես ինքն է վեր ածուած թանգարանային նմոյշի, որտեղ ժողովրդական արհեստների հետ ցուցադրուած է ժողովրդական ճարտարապետութիւնը:

Ժողովրդական տան հետ ծագումնաբանական կապ կարելի է գտնել նաեւ «Եղեռնի» զոհերի յուշարձանում (նկար 8, 9 - ճարտ. Թարխանեան, Ս. Քալաշեան): Բայց բոլորովին այլ մեկնաբանութեամբ, քան արուած է Մարդարապատի թանգարանում:

«Եղեռնի» յուշարձանի հեղինակները լուծել են բարդագոյն մի խնդիր՝ արտայայտելով ճարտարապետութեան միջոցով մեծագոյն

ազգային վիշտը եւ ժողովրդի վերածնունդը: Այստեղ կրկին կայ դիմում ժողովրդական ակունքներին, բայց ոչ թէ ձեւերի, մանրամասների յորինուածքային հնարների օգտադործման իմաստով, այլ աշխարհի կերպարի ազգային մեկնաբանման իմաստով:

Համալիրի յորինուածքային եւ իմաստաբանական էութիւնը պանթէոն-խորհրդանշանն է կազմուած քարէ մեծածաւալ մոյթերով՝ խոնարհուած դէպի շրջանի ներսը, որի կեդրոնում վառուած է յաւերժական կրակը (նոյն ձեւով «գլխատան» կեդրոնում վառուած է օջախ):

Զուգորդութիւնները բացարձակապէս պատկերաւոր են: Գլուխատան սյուրիակ տարածութիւնը՝ զիւղացու ամբողջ աշխարհն է, «Հաղարաջն» ծածկը՝ երկնականարի խորհրդանշը: «Նդեռնի» յուշարձանը մոյթերի ծաւալ է, որոնք աւարտում են շրջանը, ընկալում ամբողջ ազգային աշխարհը, նիւթական եւ հողեւոր, նրա ամբողջ վիշտը, ջջանալով ոչ լռել նրա մասին, ոչ էլ փոքրացնել: Մուգ մոխրադոյն բազալտէ մոյթերը պահում են երկինքը, ոչ թէ նրա խորհրդանշը, այլ հենց երկինքը: Դա նոյնպէս տալիս է կառուցուածքին վեհ, ոչ-երկրային մասշտաբ: Այդ յատկապէս ընկալելի է համալիրի արտաքին, մարդկային համաչափութիւնները հետ համեմատելիս: Երկու տարբեր մասշտաբներ — արտաքին եւ ներքին, հենց այստեղ՝ զգացմունքային ազդեցութեան կեդրոնում, տեղին են: Սա նոյնպէս աւանդական է հայ ճարտարապետութեան համար — միջնադարեան հայկական եկեղեցին նոյնպէս երկմասշտաբ է, ընկան, մարդկային արտաքինից, եւ վեհ՝ վերացական նշխում, դմբէթի տակ: Տարբեր են խնդիրները, տարբեր է եւ զաղափարախօսութիւնը, բայց նոյնն է ճարտարապետութեան, արուեստի աւանդոյթը:

Համալիրի ճարտարապետութեան մէջ կան նաեւ մանրամասներ, «խորհրդանշիչ», որոնք դուցէ չեն ընկալւում անմիջապէս, բայց ամբողջ ճարտարապետութեան հետ միասին ձգտում են կերպարայնութեան: Դա անսովոր բարձր, ինչպէս տաճարներում, աստիճաններն են, որոնք տանում են ոչ թէ վերեւ, այլ ներքեւ՝ դէպի պանթէոն, կամ կոմիտասեան պատարազի վեհ, վշտալից եղանակը, կամ էլ պանթէոնի հիմքի իւրայատուկ թեքուածութիւնը դէպի կեդրոն: Այս ամէնը ստեղծում է ծայրայեղութեան, զգացմունքային լարուածութեան մթնոլորտ:

Յուշարձանը, որ կազմուած է պանթէոնից, 30-մեթրանոց կոթողից եւ հորիզոնական պատից, որի վրայ նախատեսուած է կերտել բարձրաքանդակ, իր մէջ պարունակում է խոր տեղեկազրկան-խորհրդանշական իմաստ. կոթողը՝ ուղղաձիգ-մակերեւոյթում կիսուելով խորհրդանշում է ժողովրդի բաժանուածութիւնը երկու մա-

սի․ տասներկու մոյթերը խորհրդանշում են տասներկու նահանգները, որոնք առաւել չափով տուժել են եղևունի ժամանակ :

Այս վերջին երկու շինութիւնների օրինակներից կարելի է եզրակացնել թէ որքան բազմալոզմ է ազգային ինքնատիպութեան խորհրդանշութիւնը, որքան խորն են ազգային ճարտարապետութեան արմատները եւ միեւնոյն ժամանակ որքան կենսական են — ձեւերի եւ հնարների ամենապարզ «բառացի» կիրառութիւններից մինչև բարդ միջնորդաւորուած զուգորդումներ :

Ազգային ինքնատիպութեան համադրման արտայայտութիւններից բացի 70-ական թուականներին հայ ճարտարապետութեան մէջ բաւականին յաջող դարգանում էր աւանդոյթների հետ միջնորդաւորուած կապերի ձգտումը : Նման ճարտարապետութիւնը կամ ընդհանրապէս զուրկ է արտաքին ձեւական խորհրդանշութիւնից (ամառային «Մոսկուա» կինոթատրոն, ճարտարապետներ՝ Ս․ Կնդեղցեան, Թ․ Գէորգեան, «Հրազդան» մարզադաշտ, ճարտարապետներ՝ Կ․ Յակոբեան, Գ․ Մուշեղեան, Կառուցող՝ Է․ Թոսունեան), կամ էլ այնքան խորն է, որ չի յաջողում անց կացնել զուգորդուած կապեր, կամուրջներ դէպի ժառանգութիւն : Թերեւս, աւելի ճիշդ կը լինի խօսել այս ճարտարապետութեան ընկալման կերպարների միասնութեան մասին :

Այսպիսի ճարտարապետութեան տիպիկ օրինակներից են հանդիսանում երկդահլիճ «Ռոսիա» կինոթատրոնը 2600 հանդիսատեսի համար եւ ոչ մեծ կամերային երաժշտութեան կատարման համար դահլիճը՝ Կոմիտասի Տանը : Երկուսն էլ տեղադրուած են Երեւանի Օղակաձեւ զբոսայգում :

«Ռոսիա» կինոթատրոնը (նկար 10 — ճարտ․՝ Ա․ Թարխանեան, Յ․ Պօղոսեան, Ս․ Խաչիկեան) տիպիկ կառոյց է եւրոպական նէո-բրուքալիզմի ողով, չնայած եւ 70-ական թթ․ պլաստիկ ճարտարապետութեան որոշակի առանձնայատկութիւններով (նախագիծը 60-ական թթ․ սկիզբ, իրականացուած է 70-ական թթ․ սկզբներին) : Կոմիտասի Տան (նկար 11 — հեղինակ ճարտ․՝ Ս․ Գիրքջեան) համար աւելի շուտ բնորոշ է հնամենութիւնը — ոչ թէ ձեւերի, այլ կերպարի :

«Ռոսիա» կինոթատրոնի ճարտարապետութեան մէջ ձեւական բնութեանը որոնումը դոյակցում է զուտ ազգային դատողութեան ծագումնաբանական (ենթագիտակցական) արտայայտութեան հետ :

Կոմիտասի Տունը աւելի շուտ փորձ է ազգային ճարտարապետութեան բարձրագոյն ինքնատիպ գիտակցման :

Թէ՛ կինոթատրոնի, թէ՛ համերգային դահլիճի ճարտարապետութեան մէջ ակնառու է հայ ճարտարապետութեան ակունքների հետ բարձրանալու կապը : Դա նախ եւ առաջ արտայայտում է

ծաւալները ինքնամփոփութեան, եւ միեւնոյն ժամանակ նրանց բացուածութեան մէջ դէպքի արտաքին աշխարհը: Կինոթատրոնում՝ դահլիճները խուլ պատերի եւ միեւնոյն ժամանակ նախամուտքերի, սրճարանի, ճեմասրահի պայմանական ապակէ պատերի թափանցիկութիւնը, որը ստեղծում է ներքին տարածութեան միասնութիւն քաղաքի միջավայրի հետ: Կոմիտասի Տան ճարտարապետութեան մէջ՝ դահլիճի քարէ պարփակուածութիւնը եւ միաժամանակ բացուածութիւնը դէպքի զրօսայգի: Բեմը եւ դահլիճը նոյնպէս անջատուած են արտաքին աշխարհից ապակէ պատով: Վերեւից նայելիս համերգային դահլիճի ծաւալները տարածուած են, լուծուած են զրօսայգու տարածքի մէջ, կառուցուածքի առանձին մասեր դուրս են դալիս կանաչ դանդուածի մէջ, իրենց հերթին ներդրաւելով նրան արհեստական շրջապատի մէջ, կապելով բնութիւնը ճարտարապետութեան հետ:

Եթէ այս երկու դիտարկուող շինութիւնների ճարտարապետութեան մէջ շարունակենք որոնել ազգային-աւանդութիւնները եւ միջազգայինի միասնութիւնը, նրանց կապող օղակները, ապա պէտք է նշել ներքին տարածութեան ամբողջականութիւնը, ներքին եւ արտաքին ճարտարապետութեան միասնութիւնը, կառուցուածքային լուծման ստուգութիւնն ու յստակութիւնը, նիւթի տեկտոնիկութիւնը:

Նախ եւ առաջ դա փորձ է բացայայտելու դահլիճի տարածութեան եւ նրա լուսային շեշտի կազմակերպման ազգային աւանդոյթի իմաստը: «Ռոսիա» կինոթատրոնն իրենից ներկայացնում է երկու կցուած դահլիճ՝ կախուած հօր երկար պահուսկների վրայ, որոնք կազմակերպում են նախամուտքը, ճեմասրահը՝ ամբողջ յօրինուածքի կեդրոնը: Կոմիտասի Տունը դահլիճի, բեմի, ճեմասրահի ամբողջական տարածութիւն է՝ գօտիաւորուած, բայց չմասնատուած (չէ՞ որ թէ՛ գլխատան եւ թէ՛ միջնադարեան հայկական տաճարի ներքին տարածութիւնը ենթարկուած է այս սկզբունքին. այստեղ կան սոսկ շեշտեր. կրակ՝ գլխատան կեդրոնի օջախը, տաճարի կեդրոնի գլմբէթը եւ, յատկապէս, լոյսը): Համերգային դահլիճի ճարտարապետութեան մէջ եւս լոյսը խաղում է առաջնակարգ դեր (ինչպէս նաեւ «Ռոսիա» կինոթատրոնում): Դահլիճի ամբողջական, միասնական տարածութիւնը պայմանականօրէն բաժանուած է երեք նաւի եւ շեշտուած է կեդրոնական գմբէթով՝ այս շինութեան ամենախորհրդանշական առանձնատիւնները, որոնք թոյլ են տալիս խօսել նրա կերպարի հնարանացման մասին (տղաւորութիւնը ուժեղանում է որակով իտէլական «եկեղեցական» լսելիականութեամբ):

Մինչ այս՝ հայ ճարտարապետութեան ազգային սկզբունքները

իրականացում էին ոչ մեծ գողտրիկ շինութիւններում: Միեւնոյն ժամանակ արդի ճարտարապետութեան համար յատկանշական է ոչ միայն տիպարանական շարքի մեծացումը, այլև տիպարանօրէն տարբեր միաւորների համադրումը բազմաբնոյթ համալիրներում:

Այս առումով հետաքրքիր է Երիտասարդութեան Պալատը Երեւանում (նկար 12 - ճարտ.՝ Ս. Խաչիկեան, Ա. Թարխանեան, Յ. Պօղոսեան եւ ուրիշներ): Բետոնեայ չորս սանդղափուլները (հայ ճարտարապետութեան համար բնորոշ սանդղափուլային համակարգը առաջին անգամ է կիրառուած նման մեծ շինութեան մէջ) հնարաւորին չափ հաւաք են եւ միաւորում են 130-000 խոր. մ. ծաւալ:

Խուլ մակերեսների յստակ ձեւերը կրում են բետոնային սանդղափուլների հորիզոնականները, հիւրանոցի ուղղաձիգը եւ միեւնոյն ժամանակ միաձուլում են բնութեան հետ: Ներքին սանդղափուլ ձգուած ստիմեթրիկ ծաւալները «մարում են» սանդղափուլների հորիզոնականներով, բայց կամարային կառուցուածքները եւ, յատկապէս, 14 յարկանի հիւրանոցը վերջնականապէս հաստատում են ձգտումը վեր, ստեղծելով հայ ճարտարապետութեան համար բնորոշ շարժական ոչ-սիմեթրիկ յօրինուածք: Եւս մէկ փորձ կապուելու աւանդոյթի հետ՝ ուղղաձիգը եւ հորիզոնական ուղղութիւնների շարժականութեան միջոցով, շերտերի համակարգի միջոցով:

Այս դադափարին է պատկանում ոչ միայն համալիրի ծաւալատարածական տեղային լուծումը, այլև քաղաքաշինականը՝ Երիտասարդութեան Պալատը տրամաբանօրէն շարունակում է Երեւանի հիւսիսային մասի բնական ամֆիթատրոնի վրայ խոյացող համաքաղաքային շէշտերի շարքը:

Ներդրււումը լինելով ամբողջ քաղաքի ծաւալատարածական բովանդակութեան մէջ, Երիտասարդութեան Պալատը բացում սանդղափուլների եւ դիտահրապարակների համակարգով դէպի քաղաք, ինքն է ձգում քաղաքը եւ չրջապատող տարածութիւնը: Բազմաթիւ հարթակներից, աստիճաններից, սրճարանից, ճաշարահանրից, հիւրանոցի մեծ մասի համարներից, եւ վերջապէս, դիտահրապարակից բացում է հոյակապ համայնապատկեր թամանեանական Երեւանի եւ Արարատի վրայ:

Եւս մէկ կապ աւանդոյթի հետ՝ միջնադարեան հայկական վանքերի համար աւանդական յատակադժի եռոտանցք յօրինուածքի միջոցով (Սանահին, Հաղբատ, Գօշավանք, Հաղարծին, Կեչառիս, Հատիճ): Խօսքը հարսանեաց դահլիճի, հիւրանոցի ծաւալով աւարտուող կեդրոնական եւ լողաւազանի ու համերգային դահլիճի առանցքների մասին է:

Հայ շինարարների անխախտ օրէնքն է եղել շինութեան ներ-

քին կառուցուածքի արտայայտութիւնը արտաքին ծաւալի մէջ : Պարբիակ, հաւաք, ձուլուած տարածական լուծումների միաւորներում յատակադժային առանցքները շեշտուած էին ուղղաձիգներով : Երկրասարդութեան Պալատի յօրինուածքի բոլոր երեք առանցքները բացայայտուած են եւ շեշտուած կամարածեւ յեմաններով : Կամարի թեման, որը դիւստորն է համալիրի ճարտարապետութեան մէջ, «խօսում» է աղային ճարտարապետութեան աւանդական ձեւերի հետ :

Այստեղ՝ նահանջը այն սեփական ստեղծադրածական ծրագրից, որը հեղինակները ամենայն մճռականութեամբ առաջարկեցին «Ռոսիա» կլինոթատորնի ճարտարապետութեան մէջ եւ որին հետեւում էին նախորդ աշխատանքներում, արդիւնք է ընդհանուր շարժման, որ երեւաց 70-ական թթ. սկզբից եւ արտայայտուեց աւանդական ձեւերի նկատմամբ աւելի մեծ ուշադրութեամբ եւ անվստահութեամբ, որ հնարաւոր է աղային ինքնատիպութեան արտայայտումը առանց արտաքնածեւային վերյուշերի :

Նահանջի խթան կարող էր հանդիսանալ նաեւ հեղինակների կասկածը լադմարնոթ կառուցուածքում ժառանգորդութեան պահպանման հնարաւորութեան մէջ. Երկրասարդութեան Պալատի ներքին տարածութիւնը մասնատուած է, զուրկ է ամբողջականութիւնից, շնայած դրանից խուսափելու նպատակով ներքին տարածութեան համախմբմանը կեդրոնական ճեմասրահի շուրջը :

Մենք դիտարկեցինք արդի հայ ճարտարապետութեան մէջ աղային ինքնատիպութեան արտայայտման առանձին ձեւերը եւ սկզբունքները : Կարելի է անել որոշ եզրակացութիւններ :

Արդի հայ ճարտարապետութեան աղային ինքնատիպութիւնը յաճախ արտայայտուած է փակ ձեւերում, որոնք պահանջում են յատուկ, մասնադիտական հետազոտութիւն-ձգտում, որն ընդհանրապէս յատկանշական է աղային ճարտարապետութիւնների ժամանակակից դարդացման համար : Նրա համար առաջնային են ոչ թէ անցեալի ճանաչման ձեւական դարդային եղանակները, այլ նրա արտայայտումը բարդ, զուգորդուած դործառնական, իմաստաբանական, կերպարային խորհրդանիշերի միջոցով, յօրինուածքային, մասշտաբատեկոտնիկ ամբողջականութեան պահպանման եւ ընթացման մէջ «ներխուժելու» սկզբունքի միջոցով :

Աղային ճարտարապետութեան ստեղծման փորձերը յաճախ հայ ճարտարապետներին բերում էին տարածութեան կազմակերպման աւանդոթի իմաստի կերպարա-խորհրդանշական բացայայտմանը, որն արտայայտուած է նախ եւ առաջ յատակադժային եւ քաղաքացիական սկզբունքներում, օրինակ՝ Երեւանի դիւստոր յատա-

կազմի՞ծը կամ «Ռոսիա» կիրնոթատրոնը:

Միւս կողմից ազգային ճարտարապետութեան դանձարանից ձեւերի, մանրամասերի «մէջբերումների», «թամանանական» սկզբբունքը, անցնելով դժուար ուղի, դարձաւ նոր որակ եւ ձեռք բերեց նոր ձեւեր:

Օրինակները շատ են, բայց նրանք հսկասական են: Երբ նման սկզբունքը դառնում է վարպետի համոզմունքը, ինչպէս դա Ա. Թամանեանի մօտ էր, ապա մենք ունենում ենք «դպրոցատեղի» ճարտարապետութեան հոյակապ օրինակ, բայց երբ նոյն սկզբունքը դառնում է բոլոր ճարտարապետներին կողմից կիրառուող հնարք, որոնք, բնականաբար, ունեն վարպետութեան տարբեր աստիճան, ապա, ինչպէս ետպատերազմեան ժամանակաշրջանում, ճարտարապետութիւնը ձեռք է բերում հնամենի դարդաքանդակային դժեր:

Աւանդական եւ նոր ճարտարապետութեան բաղձամակարդակ կապերը առաւել օրկանապէս արտայայտող վերը նշուած երկու սկզբբունքները, բնականաբար, յաճախ են ներհիւսուում, դոյակցում այս կամ այն կառուցուածքի, կամ՝ ճարտարապետի ստեղծագործութեան մէջ:

Դրա հետ մէկտեղ «մէջբերումների» պարզ «ձեւական» վերյուշերի սկզբունքը աւելի հեշտ է բացայայտուում, քան տարածական համակարգերի «տառադարձութեան» սկզբունքը. յայտնի աւանդական ձեւերը, յօրինուածքային հնարները կամ խորհրդանիշերը, անկասկած, ընկալուում են որպէս ազգային, այնինչ տարածական լուծումներն աւելի միջնորդաւորուած են թէ՛ իրենց արտայայտման ձեւերով, թէ՛ անցեալի հետ կապի միջոցով:

## THE NATIONAL CHARACTERISTICS OF MODERN ARMENIAN ARCHITECTURE

KAREN BALIAN

### (Summary)

After a survey of the sixty years of modern Armenian architecture in Armenia, the author studies in detail a number of urbanization plans, monuments, and architectural complexes of Armenia, and concludes that the national characteristics of modern Armenian architecture often are expressed in different ways: in closed forms, in the reinterpretation of the traditional manipulations of architectural space, and in the integration of the «citations» derived from the rich treasure of Armenian historical architecture.

Հասցե.—

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW

HAIGAZIAN COLLEGE  
P. O. Box 11-1748  
BEIRUT, LEBANON